# ԱՐՏԱՇԵՍ ՄԱՄԻԿՈՆԻ ԳԵՂԱՄՅԱՆ



Ծնվել է 1949թ., Երևանում: 1966թ. ավարտել է Երևանի Ա. Չեխովի անվան թիվ 55 դպրոցը և ընդունվել Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտ:

1971թ. աշխատանքի է անցել նույն ինստիտուտի ընդհանուր էլեկտրատեխնիկայի ամբիոնում, հետո ընտրվել ֆակուլտետի ԼԿԵՄ կոմիտեի ազատված քարտուղար, 1973թ.՝ ինստիտուտի ԼԿԵՄ կոմիտեի քարտուղարի տեղակալ, 1974թ.-ից՝ քարտուղար:

1972-1976թթ. սովորել է պոլիտեխնիկական ինստիտուտի հեռակա ասպիրանտուրայում:

1976թ. նշանակվել է ՀԼԿԵՄ կենտկոմի ուսանողական երիտասարդության բաժնի վարիչ, աշխատել ՀԿԿ կենտկոմում՝ կազմակերպական-կուսակցական աշխատանքների բաժնի հրահանգիչ, սեկտորի վարիչ, բաժնի տեսուչ (1979-1985թթ.):

1985-1986թթ. ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղարի օգնականն էր, կազմկուսաշխատանքների բաժնի վարիչի առաջին տեղակալը:

1987-1990թթ. ղեկավարել է կուսակցության Մաշտոցի շրջանային կազմակերպությունը:

1990թ. Ա. Գեղամյանը Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահն էր: Հետագա տարիներին զբաղվել է տնտեսական գործունեությամբ:

1999թ. ընտրվել է ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր:

2001 թվականից <<Ազգային միաբանություն>> կուսակցության նախագահն է: